

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2017թ.-ի սեպտեմբերի 01-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. Դասախոսների 2017-2018 ուստարվա ծանրաբեռնվածության հարցը:
2. Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս. տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին – 2017-18թթ. ուստարվա արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին հարցը:

Նիստի նախագահ Ս.Մելիքյանը ներկայացրեց ցանկը.

- | | |
|--|---------------------|
| 1.Մելիքյան Սաթենիկ Հարությունի- ամբիոնի վարիչի պ/կ, արվեստ. գ/թ, դոցենտ- | - 1.25 հ., 1016 ժամ |
| 2.Հակոբյան Արա Հրավարդի - արվեստ. գ/ թ, դոցենտ | - 0,25 հ.,238 ժամ |
| 3. Հակոբյան Հրավարդ Հրայրյայի - արվեստ. գ/դ, պրոֆեսոր և ամբիոնի պրոֆ. խորհրդատու | - 0.25 հ., 212 ժամ |
| 4. Մաթևոսյան Կարեն Արտուշի –պատ. գ/դ, պրոֆեսոր, համատեղ. | - 0,5 հ., 411 ժամ |
| 5.Աղաջանյան Սերգեյ Արարատի - բան. գ/դ, պրոֆեսոր, համատեղ. | - 0,5 հ., 418 ժամ |
| 6. Բաղդասարյան Արմինե Սուրենի -արվեստ գ/թ,ասիստենտ | -1 հ., 1063 ժամ |
| 7. Առաքելյան Աշոտ Վահանի - արվեստ գ/թ, ասիստենտ | - 0.75հ., 809 ժամ |
| 8.Գևորգյան Արամայիս Գևորգի – արվեստ գ/թ ,ասիստենտ | -1 հ., 1074 ժամ |
| 9.Գամաղելյան Վարդիթեր Միհրանի - ասիստենտ | -1 հ., 1076 ժամ |
| 10. Հովհաննիսյան Սամվել Գալուստի - արվեստ գ/թ, ասիստենտ համատեղ. | - 0,5 հ, 531ժամ |
| 11. Մալոյան Զարուհի Անրիի- հոգ. գ/թ., դասախոս | - 1 հ., 1073 ժամ |
| 12. Իսկոյան Լիլիթ Ամրաստանի - դասախոս | - 1 հ., 1076 ժամ |

Նիստի նախագահ Ս.Մելիքյանը նշեց, որ 2017-18թթ. ուստարվա ուսումնական ծավալներում մենք ունենք ժամաքանակի նվազում: Այն առաջնահերթ պայմանավորված է մեր կողմից սպասարկվող` արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մշակութաբանություն մասնագիտություններում դիմորդների քանակի նվազմամբ:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից նոր ուսումնական տարում հրամանագրման ենք ներկայացրել համալսարանի կողմից հայտարարված մրցույթներով ընտրված, գիտական աստիճան և կոչում ունեցող, հրատարակված գիտական աշխատություններ և մանկավարժական գիտափորձ ունեցող անձանց.

Արտահայտվեցին - Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Արա Հակոբյանը :

Նշեցին որ ներկայցվածները ունեն մանկավարժական փորձ, իրենց ներդրումները ունեն գիտության ասպարեզում, շատերը հրատարակել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական հոդվածներ :

2. Լսեցին – Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս. տարվա առարկայական փաթեթների և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատվել Ա.Հակոբյանի, Հ.Հակոբյանի, Ս.Մելիքյանի, Ա.Բաղդասարյանի և Լ.Իսկոյանի 2017-2018 ուս. տարվա առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: Հանձնարարվեց մինչ սույն թվականի սեպտեմբերի 10-ը ավարտել բոլոր առարկաների ԱՈՒՓ:

3.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Նիստի քարտուղար՝

Ս.Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

2017թ.-ի սեպտեմբերի 08-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածուի առաջադրման հարցը:
2. Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս. տարվա ԱՈՒՓ.ների և առարկայական տրոհումների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր

1. Լսեցին - ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածուի առաջադրման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ Ս.Մելիքյանը ներկայացրեց ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնին առաջադրման հարցը: Առաջադրվեց դեկանի պաշտոնակատար Արա Հակոբյանի թեկնածությունը: Արտահայտվեցին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աղաջանյանը, արվեստագիտության թեկնածու, ասիստենտ Աշոտ Առաքելյանը:

Վերջիններս նշեցին, որ գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Արա Հրավարդի Հակոբյանը երկար ժամանակ աշխատում է այս ֆակուլտետում, շուրջ տաս տարի դեկավարել է Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը: Լինելով արվեստաբան և գործող նկարիչ Ա.Հակոբյանը տիրապետում է նաև ուսումնական կերպարչական աշխատանքներին և այդ ամենը կնպաստի ֆակուլտետի զործունեությանը:

Որոշեցին – Դեկանի պաշտոնի համար Արա Հակոբյանի առաջադրման հարցը դնել բաց քվերկության: Քվեարկության մասնակցած ամբիոնի բոլոր անդամները միաձայն առաջադրեցին Արա Հակոբյանի թեկնածությունը գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին:

2.Լսեցին –Ամբիոնում դասավանդվող առարկաների 2017-2018 ուս. տարվա ԱՈՒՓ.ների հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատել Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության
ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 2017-2018 ուս. տարվա ԱՈԻՓ.ները:

3.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝	Ս.Մելիքյան
Նիստի քարտուղար՝	Ս.Գրիգորյան

Արձանագրություն 3

2017թ.-ի հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հերթական նիստը

Օրակարգում

1. 2017-2018 ուս տարվա Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում , Մշակութաբանություն մասնագիտությունների մագիստրոսական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում:
2. 2017-2018 ուս. տարվա բակալավր 4-րդ կուրսի Կերպարվեստի պատմություն և տեսություն , Մշակութաբանություն մասնագիտությունների ավարտական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում:
3. 2017-2018 ուս. տարվա հեռակա ուսուցման Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտությունների 5-րդ կուրսի ավարտական թեմաների հաստատում և ղեկավարների նշանակում:
4. Բակալավրիատի և մագիստրատուրայի միջանկյալ ստուգման հարցաշարերի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – 2017-2018 ուս տարվա Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների մագիստրոսական թեմաների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Ս.Մելիքյանը ներկայացրեց թեմաների ցանկը և նշանակվեցին ղեկավարներ:

Կերպարվեստի տեսություն, պատմություն և կառավարում բաժնի 2017-2018 ուս. տարվա

1-ին կուրսի մագիստրոսական ատենախոսությունների թեմաներ

N	ՈՒՄԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԹԵՄԱՆԵՐ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ
1.	Հովհաննիսյան Տաթևիկ Հակոբի	Միրանեսի /13-րդ դար/ ճարտարապետական ժառանգությունը	Կ.Մաթևոսյան /պատ. գ.թ., պրոֆ./
2.	Նավասարդյան Լիլիթ Վարդանի	Կենցաղային ժանրը թիֆլիսահայ կերպարվեստում (19-րդ դար)	Վ.Գամաղելյան /ասիստենտ/
3.	Խաչատրյան Անի Արարատի	Տավուշի մարզի Ձորափորի մշակույթը	Ա.Գևորգյան /արվ. գ.թ., ասիստենտ/

4.	Հովհաննիսյան Լիլիթ Արշակի	Ցուցահանդեսային բիզնես. Հայաստանի պետական և մասնավոր պատկերասրահները	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ., ասիստենտ/
5.	Խաչումյան Լուիզա Գագիկի	Կուրատորական գործունեությունը որպես արտ-մենեջմենթի բաղկացուցիչ	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ., ասիստենտ/
6.	Մելիքյան Թերեզա Սարգսի	Գիշերային մոտիվները հայ բնանկարչության մեջ (19-րդ դարի 2-րդ կես -20-րդ դարի 1-ին կես)	Ա.Հակոբյան /արվ. գ.դ., դոցենտ/

**Մշակութաբանություն բաժնի 2017-18 ուս. տարվա 1-ին կուրսի
մագիստրոսական աստենախոսությունների թեմաներ**

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԹԵՄԱՆԵՐ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ
1.	Գևորգյան Շուշանիկ Ռազմիկի	Ավանդույթի դերը ժամանակակից հայկական ընտանիքում	Ս.Աղաջանյան /բան. գ.դ., պրոֆ./
2.	Թահմասյան Ալին Զորիկի	19-20-րդ դարերի թիֆլիսահայ կերպարվեստի գեղագիտական ընդհանրությունը	Ա.Բաղդասարյան /արվ. գ.թ., ասիստենտ/
3.	Հովհաննիսյան Հռիփսիմե Ստեփանի	Միջնադարյան հայկական գրատունը որպես վանական համալիրի մաս	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./

Որոշեցին – Թեմաներն ու ղեկավարները հաստատել:

2.Լսեցին – 2017-2018 ուս տարվա բակալավր 4-րդ կուրսի Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտությունների ավարտական թեմաների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Ս.Մելիքյանը ներկայացրեց աշխատանքների ցանկը և նշանակվեցին ղեկավարները:

**Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժնի 2017-18 ուս. տարվա
բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաներ**

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԹԵՄԱ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Ադամյան Ռոբերտ Գևորգիի	Ազգային թեմատիկական Սուրեն Սաֆարյանի արվեստում	Ա.Բաղդասարյան /արվ. գ.թ., ասիստենտ/

2.	Թորիկյան Արփինե Սարգսի	Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) «Չարենց և Կոմիտաս» կտավը	Վ.Գամաղեյան /ասիստենտ/
3.	Խուդատյան Խաչատուր Գագիկի	Կոմիտասի կերպարը հայ գեղանկարչության մեջ /Եղիշե Թադևոսյան, Փանոս Թերլեմեզյան/	Ա.Գևորգյան /արվ. գ.թ, ասիստենտ/
4.	Բաղդասարյան Մելինե Մոմիկի	Ռուսաստանաբնակ հայ նկարիչների ստեղծագործությունը /Գևորգ Կոտյանց, Թորոս Վիգիլյան, Ալբերտ Պապիկյան/	Ա.Առաքելյան /արվ. գ.թ, ասիստենտ/
5.	Կարապետյան Ռուզան Վրեժի	Մասունցի Դավիթ Էպոսի մեկնաբանումները Արտաշես Հովսեփյանի արվեստում	Ա.Բաղդասարյան /արվ. գ.թ, ասիստենտ/
6.	Հակոբյան Սեդա Աշոտի	Ստեփան Գրիգորյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը	Ա.Գևորգյան /արվ. գ.թ, ասիստենտ/
7.	Հովսեփյան Սիլվի Հովսեփի	Ձմեռային տեսարանները հայկական բնանկարում /19-րդ դարի վերջ- 20-րդ դարի սկիզբ/	Զ.Մալոյան /հոգ. գ.թ./
8.	Մանուկյան Լուսինե Մուշեղի	Նատյուրմորտը Մկրտիչ Ճիվանյանի արվեստում	Ա.Առաքելյան /արվ. գ.թ., ասիստենտ
9.	Մարկոսյան Նարինե Վահրամի	Եղիշե Թադևոսյանի «Հանճարն ու ամբոխը» ստեղծագործությունը	Լ.Իսկոյան /դասախոս/
10.	Մարտիրոսյան Ավետիս Արմենի	Մարտիրոս Սարյանի «Երեք հասակ» աշխատանքը	Մ.Մկրտչյան /արվ. գ.թ./
11.	Նահապետյան Աստղիկ Վարդանի	Հովհաննես Թումանյանի պոեմների նկարազարդումները /Հ.Թումանյանի թանգարանի հավաքածու/	Ա.Բաղդասարյան /արվ. գ.թ., ասիստենտ
12.	Խաչատրյան Լիլիթ Արթուրի	Գորգը հայ գեղանկարչության մեջ	Լ.Իսկոյան /դասախոս/

**Մշակութաբանություն բաժնի 2017-18 ուս. տարվա
բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաներ**

N	ՌԻՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ,	ԹԵՄԱՆԵՐ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
---	-----------------------------	---------	-----------------

	ՀԱՅՐԱՆՈՒՆ		
1.	Գրիգորյան Անի Գեղամի	Շիրակի մարզի տարազի առանձնահատկությունները	Զ.Մալոյան /հոգ. գ.թ./
2.	Կիրակոսյան Գայանե Վլադիմիրի	Արա Հարությունյանի մոնումենտալ արվեստը	Զ.Մալոյան /հոգ. գ.թ./
3.	Գիշյան Անուշիկ Գևորգի	Նոյեմբերյան համայնքի պատմամշակութային հուշարձանները	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./
4.	Ավետիսյան Գոհար Դավթի	Սպիտակի շրջանի Լեոնավան գյուղի և շրջակայքի պատմամշակութային կառույցները	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./
5.	Ափոյան Անժելիկա Սամվելի	Զավախքի Սուլդա գյուղի մշակութային առօրյան	Լ.Իսկոյան /դասախոս/
6.	Բազինյան Ռոզա Լյուդվիգի	Ներկագիր արձանագրությունները 7-րդ դարի հայկական եկեղեցիներում	Լ.Իսկոյան /դասախոս/
7.	Երիցյան Աննա Հենրիկի	Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը հայ բեմում	Վ.Գամաղելյան /ասիստենտ/
8.	Զաքարյան Իրինա Միխաելի	Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղ պատմամշակութային անցյալից	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ., ասիստենտ/
9.	Կարապետյան Անի Արսենի	Թեքեյան մշակութային կենտրոնի գործունեությունը /Հայաստանի անկախությունից՝ մինչ օրս/	Ս.Աղաջանյան /բան. գ.դ., պրոֆեսոր/
10.	Հարությունյան Միլենա Կարենի	Վալերի Բրյուսովի գնահատականը հայ մշակույթին	Ա.Բաղդասարյան /արվ. գ.թ., ասիստենտ/
11.	Մխիթարյան Ծովինար Արսենի	Վասպուրականի տարազը	Զ.Մալոյան /հոգ. գ.թ./
12.	Մովսիսյան Շուշան Դավթի	Ծովագյուղի մշակութային կոթողները	Լ.Իսկոյան /դասախոս/
13.	Պապոյան Լուսինե Արթուրի	Գյումրիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու պատմամշակութային նշանակությունը	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ., ասիստենտ/
14.	Սարգսյան Թամարա Հայկի	Վեհամոր ավետարանի դերը հայ մշակույթում	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./
15.	Սեդրակյան Լիդա Ժորայի	Մուշի Սբ Կարապետ վաքը	Վ.Գամաղելյան /ասիստենտ/
16.	Վարդանյան Մարո Գևորգի	Գեղարքունիքի մարզի Դոմաշեն գյուղի մշակութային հուշարձանները	Լ.Իսկոյան /դասախոս/
17.	Վարդանյան Սյուզաննա Արայիկի	Զեռագրերում հիշատակարան գրելու մշակույթը /9-11-րդ դդ./	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./
18.	Փիլոյան Ռոզա Գևորգի	Մեսրոպ Մաշտոցի անվան	Մ.Մկրտչյան

		Մատենադարանի դերն ու նշանակությունը	/արվ. թեկ./
19.	Հարությունյան Արսեն Աշոտի	Օրբեյան իշխանական տոհմի մշակութային գործունեությունը 14-րդ դարում	Կ.Մաթևոսյան /պատ. գ.դ., պրոֆ./
20.	Ղազարյան Լուսինե Անդրանիկի	ՀՊՄՀ-ի գեղարվեստի ֆակուլտետի կին արվեստագետները	Ա.Գևորգյան /արվ. գ.թ., ասիստենտ/

Որոշեցին – Թեմաներն ու ղեկավարները հաստատել:

3. Լսեցին – 2017-2018 ուս տարվա հեռակա ուսուցման Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտությունների 5-րդ կուրսի ավարտական թեմաների հաստատման և ղեկավարների նշանակման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ՝ Ս.Մելիքյանը ներկայացրեց աշխատանքների ցանկը և նշանակվեցին ղեկավարները:

Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժնի 2017-18 ուս. տարվա հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաներ

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԹԵՄԱ	ԳԻՏԱԿԱՆ ԴԵԿԱԿԱՐ
1.	Անդրեասյան Օվսաննա Գառնիկի	Կնոջ պատկերը Հմայակ Ավետիսյանի արվեստում	Ա.Առաքելյան /արվ. գ. ասիստենտ/
2.	Առուշանյան Լուսինե Փաշիկի	Արտաշես Հունանյանի և Վահրամ Խաչիկյանի գրաֆիկական ստեղծագործությունները / „Աբու - Լալա Մահարի,, պոեմի նկարազարդումները/	Ա.Առաքելյան /արվ. գ. ասիստենտ/
3.	Եղիազարյան Ասյա Արթուրի	Հակոբ Կոջոյանի „Տաթևի գնդակահարությունը,, աշխատանքը	Ա.Առաքելյան /արվ. գ. ասիստենտ/
4.	Կարապետյան Վարդուհի Պարույրի	Աշոտ Մելքոնյանի ստեղծագործությունը	Զ.Մալոյան /հո գ.թ /
5.	Միսակյան Արթուր Գարիկի	Վարդգես Գուլիկյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը	Ա.Գևորգյան /արվ. գ. ասիստենտ/
6.	Մարտիրոսյան Լիա Սամվելի	Դիմանկարի ժանրը Հովհաննես Զարդարյանի արվեստում	Մ.Մկրտչյան /արվ. գ.թ /

7.	Մխիթարյան Ելենա Վաչիկի	Արտաշես Հունանյանի արվեստը	Զ.Մալոյան /հոգ. գ.թ /
8.	Բաղդասարյան Ռոլանդ Կարենի	Ղուկաս Չուբարյանի մանկավարժական գործունեությունը	Մ.Մկրտչյան /արվ. գ.թ /

**Մշակութաբանություն բաժնի 2017-18 ուս. տարվա
հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաներ**

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԹԵՄԱ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Ալեքսանյան Ռուզաննա Յուրիկի	«Վերնիսաժը» Երևանի մշակութային կյանքում	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
2.	Ամիրխանյան Ջուլիետտա Նորայրի	Ավանդական հարսանյաց ծեսը արևելյան Հայաստանում	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
3.	Աջամոլյան Արմինե Լիովնիկի	Շիրակի մարզի Արթիկի շրջանի մշակութային կոթողները	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
4.	Ավետյան Ֆրիդա Աշոտի	Արտ մենեջմենթը Հայաստանի պատկերասրահներում	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
5.	Հակոբյան Լարիսա Արտավազի	Ավանդական հարսանյաց ծեսը Վասպուրականի նահանգում	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
6.	Մովսիսյան Հայկ Համլետի	Խուրջիների գեղագիտական և կիրառական նշանակությունը	Լ.Իսկոյան /դասախոս /
7.	Սահակյան Լուսեղեն Համլետի	Թանաքի և ներկերի պատրաստումը հայ միջնադարյան գրչատներում / 11-13 -րդ դդ./	Ա.Գևորգյան /արվ. գ.թ, ասիստենտ/
8.	Երանոսյան Զարիա Հարությունի	Համահեղինակությունը որպես մշակութային երևույթ (կերպարվեստ)	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/

Որոշեցին – Թեմաներն ու ղեկավարները հաստատել:

4.Հաստատվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի միջանկյալ ստուգման հարցաշարերը:

5.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝
Նիստի քարտուղար՝

Ս.Մելիքյան
Ս.Գրիգորյան

Արձանագրություն 4

2017թ.-ի նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Միհրդատ Մոմենի Մոհամմադբադերինի ատենախոսության խորագրի հաստատման հարցը
2. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին-** Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Միհրդատ Մոմենի Մոհամմադբադերինի ատենախոսության խորագրի հաստատման հարցը:

Արտահայտվեցին - Նիստի նախագահ Ս.Մելիքյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդ Միհրդատ Մոմենի Մոհամմադբադերինի և իր ատենախոսության ղեկավար արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի կողմից առաջարկված «Պարսկական կերպարվեստի տպավորությունը Նոր Ջուղայի հայ նկարիչների ստեղծագործություններում» խորագրի քննարկումը: Ս.Մելիքյանը հիշեցրեց, որ ատենախոսության խորագիրը ներկայացված է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ, արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Որոշեցին - Հաշվի առնելով Միհրդատ Մոմենի Մոհամմադբադերինի և իր գիտական ղեկավար արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Հակոբյանի առաջարկությունը, նաև ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կարծիքը ատենախոսության «Պարսկական կերպարվեստի տպավորությունը Նոր Ջուղայի հայ նկարիչների ստեղծագործություններում» խորագիրը հաստատել:

2. Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝
Նիստի քարտուղար՝

Ս.Մելիքյան
Ս.Գրիգորյան

Արձանագրություն 5

2017թ.-ի նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

3. Նիստի քարտուղար ընտրելու հարցը:
4. Արա Հակոբյանի պրոֆեսորության հարցը:
5. Ավարտական կուրսերի դիպլոմային և մագիստրոսական աշխատանքների վերնագրերի որոշակի փոփոխություն կատարելու հարցը:
6. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին - Նիստի քարտուղար ընտրելու հարցը:

Արտահայտվեցին – Նիստի նախագահ Ս.Մելիյանն առաջարկեց ամբիոնի դասախոս Լիլիթ Իսկոյանի թեկնածությունը:

Որոշեցին - Ներկաները միաձայն կողմ քվերակեցին: Նիստի քարտուղար ընտրվեց Լ. Իսկոյանը:

2.Լսեցին - Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը:

Նիստի նախագահ Ս.Մելիքյանը տեղեկացրեց, որ արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը ներկայացրել է ՀՀ ԲՈՂ-ի կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը: Ա. Հակոբյանն արդեն 15 տարի դասավանդում է մեր համալսարանում, հանրապետությունում և արտերկրում կազմակերպել է անհատական ցուցահանդեսներ, բազմաթիվ միջազգային ցուցահանդեսների մասնակից է: Ա. Հակոբյանը նաև լավ արվեստաբան է, ունի հրատարակած գիտական հոդվածներ և գրքեր:

Արտահայտվեցին - պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Կ. Մաթևոսյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Բաղդասարյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը և ուրիշներ: Նրանք նշեցին, որ Ա. Հակոբյանը լուրջ գեղանկարիչ է և փորձառու արվեստաբան: Բուհում դասավանդման տարիներին արժանացել է հանրապետության արվեստագետների և արվեստաբանների դրական կարծիքին:

Որոշեցին – հարցը դնել բաց քվեարկության: Նիստի ներկա գտնվող 12 անդամները միաձայն քվեարկեցին կողմ: Որոշեցին դիմել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդին՝ քննարկելու Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը, դրական կարծիքի դեպքում միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ Ա. Հակոբյանին պրոֆեսորության արժանացնելու համար:

3. **Լսեցին** –երկու թեմաների փոփոխության հարցը և այն դրվեց քննարկման:

Որոշեցին –հաստատել նոր տարբերակը.

Ուսանող	Մասնագիտություն	Կուրս	Թեմա	Նոր տարբերակ
Թորիկյան Արփինե Սարգսի	Կերպարվեստի պատմություն և տեսություն	4-րդ	Գևորգ Գրիգորյանի /Զոտտո/ «Չարենց և Կոմիտաս» կտավը	Դիմանկարի ժանրը Գևորգ Գրիգորյանի /Զոտտո/ արվեստում
Հովհաննիսյան Լիլիթ Արշակի	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	1-ին /մագիստրատուրա/	Յուցահանդեսային բիզնես. Հայաստանի պետական և մասնավոր պատկերասրահները	Անվանի արվեստագետ Ա.Ա. Օսմյորկինի հայազգի աշակերտները

4. **Ընթացիկ հարցեր:**

Նիստի նախագահ՝
Նիստի քարտուղար՝

Ս.Մելիքյան
Լ.Իսկոյան

Արձանագրություն 6

2017թ.-ի նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

7. Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի 2017 թվականի տարեկան հաշվետվություն, հաստատում:
8. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին- Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվ. թեկնածու Սաթենիկ Մելիքյանը ներկայացրեց ամբիոնի կատարած աշխատանքը տարբեր ոլորտներում: Նա խոսեց ուսումնական գործընթացի ցուցանիշների մասին /ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալ, կատարված ծավալ/, անդրադարձ կատարեց 2017 թ. ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրապարակումներին, ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերին, ամբիոնի մեթոդական կոնֆերանսների, սեմինարների քանակին և արդյունավետությանը, ինչպես նաև կարևորեց գիտահետազոտական աշխատանքները: Ս. Մելիքյանը կարևորեց արտաքին կապերի և միջազգային գործունեության առկայությունը:

Արտահայտվեցին - պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր՝ Կ. Մաթևոսյանը, արվեստագիտության թեկնածուներ՝ Ա. Բաղդասարյանը և Մ. Մկրտչյանը, ամբիոնի դասախոս՝ Լ. Իսկոյանը, ամբիոնի ասիստենտ՝ Վ. Գամաղելյանը: Նրանք նշեցին, որ ամբիոնի աշխատակազմը ապահովում է ուսումնական արդյունավետ արդյունք:

Որոշեցին –Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի գործունեության հաշվետվությունը գնահատել լավ և հաստատել: /Հաշվետվության ամբողջական տարբերակը առկա է համապատասխան բաժնում/:

2. Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

Ս.Մելիքյան
Ռ.Անանյան

Արձանագրություն 7

2017թ.-ի դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. 2017-18ու. տարվա առաջին կիսամյակի ամփոփում, պրակտիկաների արդյունքների քննարկում:
2. Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:
3. Բակալավրիատի և մագիստրատուրայի քննության հարցաշարերի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին- Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ, արվ. թեկնածու Սաթենիկ Մելիքյանի գնահատականը առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ: Նա անդրադարձ կատարեց ամբիոնի կողմից ղեկավարվող պրակտիկաներին, գնահատելով վերջիններիս ընթացքն ու արդյունքը լավ: Ս. Մելիքյանը շնորհակալություն հայտնեց աշխատակազմին ներդրած ջանքերի և ուսման մեջ որակի ապահովման համար:

Արտահայտվեցին - արվեստագիտության դոկտոր, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը: Վերջինս նույնպես ներկայացրեց իր գնահատականը ուսումնական քառամսյակում կատարված աշխատանքի վերաբերյալ:

Որոշեցին –2017-18 ուստարվա առաջին քառամսյակի ուսումնական գործընթացը համարել լավ և հաջորդ քառամսյակում ամբիոնի հիմնական գործունեությունը հաստատել:

2.Լսեցին - Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:

Արտահայտվեցին - Ամբիոնի վարիչի պ/կ Ս.Մելիքյանը ներկայացրեց կիսամյակի ընթացքում իրականացրած դասալսումները, դիտողություններն ու առաջարկությունները:

Որոշեցին – Հաշվի առնելով Ս. Մելիքյանի դիտարկումները, դրանք կիրառել հաջորդ դասապրոցեսի ընթացքում:

3.Հաստատվեցին առկա և հեռակա բակալավրիատի, մագիստրատուրայի քննության հարցաշարերը:

4.Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Քարտուղար՝

Ռ.Անանյան

Արձանագրություն 8

2018թ.-ի փետրվարի 2-ին տեղի ունեցավ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. 2017-18 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ԱՌԻՓ-ների հաստատում, վերահաստատում :
2. Հեռակա ուսուցման Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտությունների 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների վերաստատում :
3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում, ամբիոնի աշխատանքային պլանի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2-րդ կիսամյակի ԱՌԻՓ-ների հաստատման և վերահաստատման հարցը :

Որոշեցին - քննարկում, ուղղումներից հետո ԱՌԻՓ-ները google docs / PDF կամ այլ տարբերակով տեղադրել Classroom հարթակում :

2. Լսեցին - Ս. Մելիքյանը հիշեցրեց հեռակա ուսուցման Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների վերնագրերը: Իմչպես նաև վերականգնված ուսանողի համար ընտրվեց ղեկավար և թեմա :

Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

հեռակա ուսուցմամբ սովորող Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժնի 2017-18 ուս.

տարվա

ավարտական աշխատանքներ

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԹԵՄԱ	ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
13.	Անդրեասյան Օվսաննա Գառնիկի	Կնոջ պատկերը Հմայակ Ավետիսյանի արվեստում	Ա.Առաքելյան /արվ. գ.թ, ասիստենտ/
14.	Առուշանյան Լուսինե Փաշիկի	Արտաշես Հունանյանի և Վահրամ Խաչիկյանի գրաֆիկական ստեղծագործությունները / „Աբու - Լալա Սահարի,, պոեմի նկարազարդումները/	Ա.Առաքելյան /արվ. գ.թ, ասիստենտ/
15.	Եղիազարյան Այա Արթուրի	Հակոբ Կոջոյանի „Տաթևի գնդակահարությունը,, աշխատանքը	Ա.Առաքելյան /արվ. գ.թ, ասիստենտ/
16.	Կարապետյան Վարդուհի Պարույրի	Աշոտ Մելքոնյանի ստեղծագործությունը	Զ.Մալոյան /հոգ. գ.թ /
17.	Միսակյան Արթուր Գարիկի	Վարդգես Գուլիկյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/

18.	Մարտիրոսյան Լիա Մամվելի	Դիմանկարի ժանրը Հովհաննես Ջարդարյանի արվեստում	Մ.Մկրտչյան /արվ. գ.թ /
19.	Մխիթարյան Ելենա Վաչիկի	Արտաշես Հունանյանի արվեստը	Զ.Մալոյան /հոգ. գ.թ /
20.	Բաղդասարյան Ռոլանդ Կարենի	Ղուկաս Չուբարյանի մանկավարժական գործունեությունը	Մ.Մկրտչյան /արվ. գ.թ /

Գեղարվեստական կրթության ֆակուլտետ
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն
հեռակա ուսուցմամբ սովորող Մշակութաբանություն բաժնի 2017-18 ուս. տարվա
Ավարտական աշխատանքներ

N	ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԹԵՄԱ	ԳԻՏԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ
1.	Ալեքսանյան Ռուզաննա Յուրիկի	«Վերնիսաժը» Երևանի մշակութային կյանքում	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
2.	Ամիրխանյան Ջուլիետտա Նորայրի	Ավանդական հարսանյաց ծեսը արևելյան Հայաստանում	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
3.	Աջամոլյան Արմինե Լիովնիկի	Շիրակի մարզի Արթիկի շրջանի մշակութային կոթողները	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
4.	Ավետյան Ֆրիդա Աշոտի	Արտ մենեջմենթը Հայաստանի պատկերասրահներում	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
5.	Հակոբյան Լարիսա Արտավազդի	Ավանդական հարսանյաց ծեսը Վասպուրականի նահանգում	Վ.Գամաղելյան / ասիստենտ/
6.	Մովսիսյան Հայկ Համլետի	Կարպետագործություն. կիրառական նշանակությունը	Լ.Բսկոյան /դասախոս /
7.	Սահակյան Լուսեդեն Համլետի	Թանաքի և ներկերի պատրաստումը հայ միջնադարյան գրչատներում / 11-13 -րդ դդ./	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
8.	Երանոսյան Զարիա Հարությունի	Համահեղինակությունը որպես մշակութային երևույթ (կերպարվեստ)	Ս.Հովհաննիսյան /արվ. գ.թ, ասիստենտ/
21.	Ալեքսանյան Միրանուշ	Գորգագործությունը Հայաստանում. վիճապագորգեր	Լ.Բսկոյան /դասախոս /

Որոշեցին – թեմաները հաստատել:

3.Լսեցին – Ամբիոնի և ամբիոնի ՊԴԱ-ի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հարցը:

Ամբիոնի վարիչի պ/կ Ս.Մելիքյանը ներկայացրեց ամբիոնի աշխատանքային պլանը:

Որոշեցին – Ամբիոնի և աշխատակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները հաստատել:

4.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Նիստի քարտուղար՝

Ռ.Անանյան

Արձանագրություն 9

2018թ.-ի մարտի 26-ին տեղի ունեցավ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

5. Առկա ուսուցման Մշակութաբանություն, Կերպարվեստի պատմություն և տեսություն մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների վերանայում, վերահաստատում, Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների վերանայում, վերահաստատում:
6. Հայրողաց տներ այցի, վերջիններիս հյուրընկալության արդյունքների քննարկում:
7. Ամբիոնի աշխատակազմի վերապատրաստում:
8. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին - Նիստի նախագահ՝ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Մելիքյանը ևս մեկ անգամ առաջարկեց վերանայել ավարտական աշխատանքների թեմաները:

Արտահայտվեցին – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվ. դոկ./դոցենտ Արա Հակոբյանը, բան. գ/դ, պրոֆեսոր Սերգեյ Աղաջանյանը, ամբիոնի ասիստենտ Վարդիթեր Գամաղեյանը:

Որոշվեց - կատարել հետևյալ փոփոխությունները և ուսանողներին թույլատրել նախապաշտպանության.

Անուն, ազգանուն Բաժին	Բաժին	Կուրս	Նախկին թեմա	Ներկա թեմա	Ղեկավար
Մարիամ Միրզոյան	Արվեստի պատմ., տես. և կառավարում	2 /մագիստրատուրա/	Հայ երաժիշտների կերպարը արվեստում	Հայ երաժիշտների դիմաքանդակներն ու դիմանկարները /խորհրդային շրջան/	Ս. Բաղդասարյան /արվ. գ/թ, ասիստենտ/
Սոնա Խլոպուզյան	Մշակութաբանություն	2 /մագիստրատուրա	Ժամանցային մշակույթի դրական և բացասական կողմերը	Արդի ժամանցային մշակույթը Հայաստանում	Ս.Աղաջանյան /բան. գ/դ, պրոֆեսոր/

Նախնական պաշտպանության օր նշանակվեց.

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՕՐ
Կերպարվեստի պատմություն և տեսություն /բակալավրիատ/	17.04.2018
Մշակութաբանություն /բակալավրիատ/	19.04.2018
Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում /մագիստրատուրա/	17.04.2018
Մշակութաբանություն /մագիստրատուրա/	17.04.2018

2.Լսեցին – Նիստի նախագահ Ս.Մելիքյանը ամփոփեց Հայորդաց տներ կատարված այցերը, խոսեց արդյունքերի մասին, ինչպես նաև տեղեկացրեց, որ վերջիններս տպավորված են ինչպես Գեղարվեստական կրթության ֆակուլտետի աշխատակազմի այցելությունից, այնպես էլ Գեղարվեստական կրթության ֆակուլտետ իրենց այցելությունից: Դասախոսական անձնակազմը վստահեցրեց, որ նմանատիպ այցերը կրելու են շարունակական բնույթ:

3.Լսեցին – Ս.Մելիքյանը խոսեց աշխատակազմին ստացվող վերապատրաստման մասին:

4.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Նիստի քարտուղար՝

Ռ.Անանյան

Արձանագրություն 10

2018թ.-ի մայիսի 01-ին տեղի ունեցավ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. Տեղի ունեցած նախապաշտպանության արդյունքների քննարկում:
2. Classroom հարթակի ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Մելիքյանը խոսեց նախապաշտպանությանը ուսանողների պատրաստվածության, աշխատանքների պատրաստ լինելու և թերությունները հարթելու մասին: Վերջինս փաստեց, որ տվյալ պահին չկան այնպիսի ուսանողներ, ովքեր չեն թույլատրվի պաշտպանությանը:

Արտահայտվեցին – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Վարդիթեր Գամաղեյանը, արվեստագիտության թեկնածուներ Աշոտ Առաքեյանը, Սամվել Հովհաննիսյանը, դասախոս Լիլիթ Իսկոյանը: Վերջիններս նշեցին, որ ուսանողները նախապաշտպանությանը ներկայացան պատրաստված, գրեթե ամբողջական աշխատանքներով և պաշտպանությունից ակնկալում են դրական արդյունքներ:

Որոշվեց – Բոլոր ուսանողներին թույլատրել պաշտպանության:

Արվեստի տեսության, պատմության և մշակութաբանության ամբիոնի 2017-2018 ուս. տարվա ամփոփիչ ավարտական քննության օրերը.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՕՐ
Կերպարվեստի պատմություն և տեսություն /բակալավրիատ/	21.05.2018
Մշակութաբանություն /բակալավրիատ/	16.05.2018
Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում /մագիստրատուրա/	22.05.2018
Մշակութաբանություն /մագիստրատուրա/	22.05.2018
Կերպարվեստի պատմություն և տեսություն /հեռակա/	11.06.2018
Մշակութաբանություն /հեռակա/	11.06.2018

Հանձնաժողովի կազմ

Պաշտոն	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ
նախագահ	Արարատ Աղասյան
անդամ	Արա Հակոբյան
անդամ	Սաթենիկ Մելիքյան
անդամ	Եվգենյա Քալանթարյան
անդամ	Մարգարիտա Քամալյան
անդամ	Ռիտա Գևորգյան

2.Լսեցին – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Մելիքյանն ադրադարձավ google classroom հարթակին, վերջինիս դերի ու նշանակությանը այսօրվա կրթական համակարգում:

Արտահայտվեցին – արվ. թեկնածուներ Մանե Մկրտչյանը Արմինե Բաղդասարյանը, հոգ. գիտ. թեկնածու Զարուհի Մալոյանը: Վերջիններս նշեցին, որ հարթակը լավագույնն է ուսանող/դասախոս կապի ամրապնդման, արդյունավետ շփման և գիտելիքների փոխանակման համար:

Որոշվեց – Հաջորդ ուսումնական տարում ևս բավարար ուշադրության արժանացնել համակարգը:

3.Ընթացիկ հարցեր

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Նիստի քարտուղար՝

Ռ.Անանյան

Արձանագրություն 11

2018թ.-ի հունիսի 12-ին տեղի ունեցավ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

4. Առկա և հեռակա ուսուցման Կերպարվեստի պատմություն և տեսություն, Մշակութաբանություն մասնագիտությունների բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման, Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում, Մշակութաբանություն մասնագիտությունների մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության արդյունքների ամփոփում:
5. Ամբիոնի կատարած աշխատանքի տարեկան հաշվետվություն: Դասախոսների գործունեության տարեկան հաշվետվություն:
6. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Մելիքյանը խոսեց պաշտպանությանը ուսանողների պատրաստվածության, դասախոս/ուսանող համագործակցության և ցուցաբերած արդյունքների մասին:

Արտահայտվեցին – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվ. դոկտոր, պրոֆեսոր՝ Արա Հակոբյանը, ամբիոնի վարիչի պ/կ, արվ. թեկն. դոցենտ՝ Ս.Մելիքյանը: Նրանք նշեցին, որ ընդհանուր առմամբ ավարտական ուսանողների ցուցաբերած արդյունքները գնահատում են դրական: Նիստի նախագահ Ս. Մելիքյանը հավելեց, որ անբավարար արդյունք ցուցաբերած ուսանող չի եղել:

Որոշվեց – Ցուցաբերած արդյունքը համարել լավ:

2.Լսեցին – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Մելիքյանն աղբյուրաբանաբար ամբիոնի և դասախոսների կատարած գործունեությանը 2017-18 ուս. տարվա ընթացքում:

Արտահայտվեցին – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվ. դոկտոր, պրոֆեսոր՝ Արա Հակոբյանը, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աղաջանյանը, արվ. դոկտոր, պրոֆեսոր՝ Հրավարդ Հակոբյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Կարեն Մաթևոսյանը, արվ. թեկնածուներ՝ Արմինե Բաղդասարյանը, Սամվել Հովհաննիսյանը, դասախոս Լիլիթ Իսկոյանը: Նրանք նշեցին, որ ուսումնական տարվա ընթացքում եղել է ուսանող/դասախոս ակտիվ և աղյունավետ համագործակցություն, եղել են մի շարք միջոցառում-դասախոսություն-հանդիպումներ ինչպես տեղի մասնագետների, այնպես էլ արտասահմանից հրավիրված մասնագետների հետ: Ինչպես նաև ամբիոնի ձեռքբերումը համարեցին

«Իմ ակունքներ» ուսանողական հոդվածների ժողովածուի հրատարակումը:
/Հաշվետվության ամբողջական տարբերակը առկա է ամբիոնի թղթաբանության մեջ/
Որոշվեց – Տարեկան հաշվետվությունը հաստատել:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝

Ս.Մելիքյան

Նիստի քարտուղար՝

Ռ.Անանյան